ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» սեպտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-58/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 և 16.08.2016թ. թիվ 1/73-1/20398-15 գրություններով ներկայացված «Սպեցմաշ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06947049) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.06.2016թ. թիվ ԴՎԱ/1664 և 27.06.2016թ. թիվ ԴՎԱ/1777 գրությունների հիման վրա, 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետև նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով

ուսումնասիրել «Սպեցմաշ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 10.08.2016թ. թիվ 01/04.2/3021-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 «Սպեցմաշ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06947049) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.08.2016թ. թիվ 1/73-1/20398-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերադարձնում է 10.08.2016թ. թիվ 01/04.2/3021-16 գրությունը և հայտնում է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Սպեցմաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Սպեցմաշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 04.07.2016թ. թիվ 01/04.2/2593-16 գրությամբ դիմել է «Սպեցմաշ» ՍՊԸ-ին և առաջարկել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122.1-րդ կետի համաձայն՝ Կենտրոնի ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր:

Ընկերությունը 03.08.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 և Պատվիրատուի 16.06.2016թ. թիվ ԴՎԱ/1664 և 27.06.2016թ. թիվ ԴՎԱ/1777 գրությունների վերաբերյալ առարկությունները և հիմնավորող փաստաթղթերը՝ հայտնելով, որ Ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալ չի ներկայացրել:

«Սպեցմաշ» ՍՊԸ-ն խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով 22.08.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.06.2016թ. թիվ ԴՎԱ/1664 և 27.06.2016թ. թիվ ԴՎԱ/1777 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Սպեցմաշ» ՍՊԸ-ի վերաբերյալ ի հայտ եկած տեղեկատվությունը և ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 22.08.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-58/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 1/73-3/17525-16 և 16.08.2016թ. թիվ 1/73-1/20398-15 գրություններով ներկայացված «Սպեցմաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էքսկավատորի ձեռքբերման նպատակով 08.04.2016թ. հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-20/3»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի համաձայն՝ գնման առարկան է հանդիսացել միաշերեփ էքսկավատորներ: Մասնավորապես, պահանջվել է էքսկավատոր-բարձիչ JCB3 CX կամ համարժեքը ապրանք:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4 հավելվածը՝ գնի առաջարկը ներկայացվել է հետևյալ ձևով.

ՀՀ դրամ

Չափաբաժնի անվանումը	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Ինքնարժեք (Մեկ միավորի գնի մասով)	Շահույթ (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և տվերով/	Առաջարկված ընդհանուր չափաբաժնի գինը /տառերով և տվերով/
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8x4
1	Միաշերեփ էքսկովատորներ (էքսկովատոր բարձիչ JCB 3 CX կամ համարժեք *TLB-825*)	հատ	1	26.490.000	1.385.000	5.575.000	33.450.000 /երեսուներեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար/	33.450.000 /երեսուներեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար/

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. կայացված նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սպեցմաշ» ՍՊԸ-ն:

5. Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Ընկերությանը առաջարկվել է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2016թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Սպեցմաշ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրից, որտեղ էքսկավատորի տեխնիկական բնութագրի գաբարիտները, քաշը և հիդրոսիստեմի աշխատանքային

ճնշումը չի համապատասխանում հրավերով սահմանված և մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Ընկերությանը առաջարկել է շտկելու վերը նշված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում «Սպեցմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բացատրության առկա անհամապատասխանությունների վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը համարվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

7. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Սպեցմաշ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

8. Կենտրոնը 10.08.2016թ. թիվ 01/04.2/3021-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 «Սպեցմաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը առկա չեն:

9. ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.08.2016թ. թիվ 1/73-1/20398-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերադարձնում է 10.08.2016թ. թիվ 01/04.2/3021-16 գրությունը և հայտնում է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Սպեցմաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-58/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 16.06.2016թ. թիվ ԴՎԱ/1664 և 27.06.2016թ. թիվ ԴՎԱ/1777 գրությունները և կից փաստաթղթերը, «Սպեցմաշ» ՍՊԸ-ի

03.08.2016թ. գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ ***գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը ***ներկայացված է հրավերի պահանջներին***

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գտնում ենք, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի հավելված թիվ 4-ը՝ գնային առաջարկը կազմվել է սխալ և ներկայացվել է ***հրավերի պահանջներին անհամապատասխան,*** քանի որ նշված հավելվածի աղյուսակի 2-րդ՝ գնման առարկայի անվանումը սյունյակում նշվել է ոչ միայն գնման առարկայի անվանումը, որը ըստ հրավերի հանդիսանում է ***միաշերեփ էքսկավատոր (էքսկավատոր բարձիչ JCB 3 CX կամ համարժեքը)*** ինչպես պահանջվել էր Ընթացակարգի հրավերով, այլ նաև նշվել է Ընթացակարգի հրավերով առաջարկվող ***համարժեք ապրանքի անվանումը՝ TLB-825 մոդելի էքսկավատորը,*** *որն էլ իր հերթին չի կարող հանդիսանալ գնման առարկայի բնութագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն:* Հետևաբար, Ընկերության կողմից վերը նշված գնային առաջարկը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերի պահանջներին, իսկ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ այն ենթակա չէ շտկման:

Նման պայմաններում ակնհայտ է, որ Ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկը չի համապատասխանել հրավերի պահանջներին, քանի որ Ընկերության կողմից փաստացի ներկայացվել է երկու ապրանքատեսակ՝ (***էքսկավատոր բարձիչ՝ JCB 3 CX կամ TLB-825***), ինչը շտկման ենթակա չէ և այս պարագայում գնահատող հանձնաժողովը, գնային առաջարկում խախտում արձանագրելու դեպքում, պետք է առաջնորդվեր Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում պետք է մերժեր «Սպեցմաշ» ՍՊԸ-ի հայտը:

Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը, չարձանագրելով առկա անհամապատասխանությունը՝ այն, որ «Սպեցմաշ» ՍՊԸ-ն գնային առաջարկով միարժամանակ ներկայացրել է երկու ապրանքատեսակ, և Ընկերության հայտը այդ փուլում չմերժելով, վերջինիս ճանաչել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որի հետևանքով էլ անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ինչը նշված պայմաններում եղել է ոչ իրավաչափ:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Հետևաբար, Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 01.07.2016թ. թիվ 1/73-3/17525-16 և 16.08.2016թ. թիվ 1/73-1/20398-15 գրություններով ներկայացված «Սպեցմաշ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06947049) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան